ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՐԾԻՔ

2022թ. փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը (Օրենքի նախագիծ)[1], որը հեղինակել են ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը և Վահագն Հովակիմյանը: Նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո դրանում կատարվել են էական լրացումներ, որոնք վերաբերում են Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքում նիստերի քվորման և որոշումների կայացման կարգին:

***Նախագծի հրապարակայնություն եվ թափանցիկություն***

Հարկ է նշել, որ նախագիծը մինչեւ ՀՀ Ազգային ժողովում քվեարկության առարկա դառնալը չչի ներկայացվել հանրային քննարկման, չի ուղարկվել մասնագիտական շահարգիռ համայնքին: ավելին, երկրորդ ընթերցմամբ քննարկվող օրենքի նախագիծը նախօրոք հրապարակված չէր Ազգային ժողովի կայքէջում և հրապարակվել է ուշացումով՝ օրենքի նախագծի ընդունումից հետո միայն:

Նման կարևոր փոփոխությունների պարագայում նախագծի ոչ հրապարակային լինելը հավելյալ մտահոգություններ է ստեղծում իրականացվող փոփոխությունների առնչությամբ:

ՀՀ ազգային ժողովի նման գործելակերպը խաթարում է խորհրդարանի գործունեության թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, հատկապես հաշվի առնելով օրենսդրական փոփոխության կարևորությունը դատական իշխանության և դատավորների անկախության և բնականոն գործունեության համար:

***Նախագծով կատարված փոփոխությունների բովանդակություն***

Օրենքի նախագծի 4-րդ հոդվածը սահմանում է Դատական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

***«2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին»:***

5-րդ հոդվածով նախատեսվում է Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի

[1] http://parliament.am/draftreading_docs8/P-103_DR2.pdf

նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ ***բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:»***

Մինչդեռ, Դատական օրենսգրքի գործող կարգավորումներով 92-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ ***«2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում»:***

Իսկ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ «6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ ***բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ***, իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ ***խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով»:***

Այսպիսով, Օրենքի նախագծով էականորեն իջեցվում է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, և կարևորը՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին ԲԴԽ որոշումների կայացման շեմը:

Ավելին, որևէ տարբերակում Օրենքի նախագծով այլևս նախատեսված չէ այնպիսի լուրջ կարգապահական միջոցի, ինչպիսին է լիազորությունների դադարեցումը, ինչպես նաև դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն տալու որոշումների համար, ինչպես սահմանված է Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի գործող իրավակարգավորումներով: Դատական օրենսգրքով այս որոշումների կայացման նման բարձր չափանիշի սահմանումը էական երաշխիք էր դատավորների անկախության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման համատեքստում, ինչը ունակ էր բացառելու ցանկացած դեպքում դատավորի լիազորությունների դադարեցման և նրա նկատմամբ քրեական հետապնդման հարուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշում կայացնելը:

Օրենքի նախագծի հեղինակների կողմից այս փոփոխությունը հիմնավորվում է Վենետիկի հանձնաժողովի կողմից դեռևս 2017 թվականին Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծի դրույթի մասին հայտնած կարծիքով, ըստ որի՝ ''Դատական օրենսգրքի նախագծի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, որպես դատարան հանդես գալու դեպքում, Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում առնվազն Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի երկու երրորդով: Սա շատ բարձր շեմ է, ինչը նշանակում է, որ ԲԴԽ դատավոր անդամներին անհրաժեշտ կլինի առնվազն երկու ոչ դատավոր անդամների աջակցություն որոշումն ընդունելու համար, և հակառակը: Հարց է առաջանում, ինչ կլինի, եթե անհրաժեշտ մեծամասնությունը չկազմվի, որի արդյունքում

դատավորը կենթարկվի կարգապահական պատասխանատվության: Կարող է հանգեցնել նրան, որ դատավորը արդարացվի>>:

Մինչդեռ, Օրենքի նախագծի հեղինակների ուշադրությունից վրիպում է այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովի այս կարծիքը ներկայացվել է Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ,[2] և անդրադառնում է միայն կարգապահական պատասխանատվության հարցին, **այլ ոչ լիազորությունների դադարեցման եւ քրեական հետապնդման համաձայնություն տալու հարցերին**: Ավելին, 2017թ. Վենետիկի հանձնաժողովին ներկայացված դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագիծը որևէ տարբերակում չէր նախատեսում Բարձրագույն դատական խորհրդի կողմից որպես դատարան գործելիս որոշումների կայացման կարգում:[3]

Անհրաժեշտ է փաստել, որ Վենետիկի հանձնաժողովի այս կարծիքը հաշվի առնելով արդեն իսկ Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքում տրվել է տարբերակված մոտեցում՝ մի դեպքում դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու համար նախատեսելով ***ԲԴԽ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն***, մյուս դեպքում՝ դատավորի լիազորությունների դադարեցում (որպես կարգապահական ամենածանր պատասխանատվության միջոց) և դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն տալու որոշումների դեպքում ***ԲԴԽ անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով որոշումների կայացում:***

Ավելին, Օրենքի նախագծով կատարված փոփոխությունը խնդրահարույց է նաև դատավորների արդար դատաքննության իրավունքի ապահովման համատեքստում՝ ԲԴԽ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների բողոքարկման համատեքստում: Վենետիկի հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման մեխանիզմի բացակայության խնդրին[4]: Գործող դատական օրենսգիրքը չի նախատեսում ԲԴԽ որոշումների բողոքարկման մեխանիզմ,[5] որպիսի պայմաններում դատավորները զրկված են ԲԴԽ որոշումների իրավաչափությունը ստուգելու և դրանք վերանայելու հնարավորությունից:

Ավելին, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ԲԴԽ անդամների կեսը՝ ոչ դատավոր անդամները, ուղղակիորեն ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ խորհրդարանական խմբակցությունների առաջադրմամբ[6], ինչը ԲԴԽ որոշումների կայացման գործընթացը կարող է քաղաքական ազդեցության ենթարկել և բացասաբար անդրադառնալ դատական իշխանության անկախության երաշխավորման վրա: ԲԴԽ ոչ դատավոր անդամների ընտրության պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրվել են բացառապես մեծամասնություն ունեցող քաղաքական

---

[2] https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2017)030-e

[3] Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծի 91-րդ հոդված, 4-րդ մասով Որպես դատարան հանդես գալու դեպքում, ինչպես նաև [...], Բարձրագույն դատական խորհրդի որոշումները կայացվում են Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամների առնվազն երկու երրորդ ձայներով:

[4] Վենետիկի հանձնաժողով և ԵԽ Մարդու իրքվունքների և իրավունքի գերակայության գլխավոր վարչություն, համատեղ կարծիք ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի և մի շարք այլ օրենքների մասին https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)024-e; Վենետիկի հանձնաժողով, ՀՀ դատական օրեսգրքի նախագծի մասին կարծիք, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e

[5] Դատական օրենսգիրք սահմանադրական օրենք, հոդված 156.1:

[6] Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենք, հոդված 144, 2-րդ մաս:

ուժի առաջադրած թեկնածուները[7], ավելին, ընդդիմությունը չի ներկայացրել թեկնածու և նույնիսկ որոշ դեպքերում չի մասնակցել քվեարկությանը[8]:

Այս համատեքստում, անդրադառնալով Օրենքի նախագծի հեղինակների այն մտահոգությանը, որ պրակտիկայում կարող են լինել դեպքեր, երբ ԲԴԽ չի ունենա ամբողջական կազմ և անհրաժեշտ քվորում որոշումներ կայացնելու համար, ապա անհրաժեշտ է նշել, որ ոչ թե պետք է իջեցնել դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց լիազորությունները դադարեցնելու, քրեական հետապնդման և ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու որոշումների կայացման համար անհրաժեշտ ձայների շեմը, այլ օրենսդրական մակարդակում նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրության առավել կայուն և քաղաքական վայրիվերումներից զերծ կարգ՝ երաշխավորելու դատական իշխանության անկախության և հաշվետվողականության ապահովման իրավասություն ունեցող միակ սահմանադրական մարմնի գործունեության անընդհատությունը և արդյունավետությունը:

---

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

---

[7]Վիգեն Քոչարյանն ընտրվեց ԲԴԽ անդամ, https://hetq.am/hy/article/104912 ; Գրիգոր Բեքմեզյանը ընտրվել է ԲԴԽ անդամ,https://www.civilnet.am/news/192171/%D5%B7%D5%B8%D6%82%D5%BF%D5%B8%D5%BE-%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AF%D5%A6%D5%A3%D5%A1%D6%84-%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80-%D5%A2%D5%A5%D6%84%D5%B4%D5%A5%D5%A6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%BE%D5%A5%D6%81-%D5%A2%D5%A4%D5%AD-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4/, Լիպարիտ Մելիքջանյանն ընտրվեց ԲԴԽ անդամ https://www.aysor.am/am/news/2018/02/22/%D5%84%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D6%84%D5%B5%D5%A1%D5%B6/1378761:

[8]Ազատություն Ռ/Կ, Գագիկ Ջհանգիրյանն ու Դավիթ Խաչատուրյանը ընտրվեցին ԲԴԽ անդամներ, https://www.azatutyun.am/a/31063941.html ;